

Ընկերութիւնն ունի՝

Տոկոսաբեր արժէտոմներ	10458	84
Ընթացիկ հաշիւ առևտրական բանկում	2497	33
Առձեռն գանձարանում	300	75
	ԲՈՂԸ	17602 28

Բացի ստրանից երեք հատ օսմանեան արծաթոյ դրամ, դպրոցական կահկարասիք և այլ իրեր:

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՏ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԱԶԳԻՒՍ:

Նրջաբերական կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ի 28 ապրիլի յանուն թեմական Առաջնորդաց Հայոց Ռուսաստանի, որով պատուիրէ ազդ առնել ամենայն վարչութեանց եկեղեցական—ծխական ուսումնարանաց Հայոց թէ՛ ի վերայ կրօնական ուղղութեան ուսումնարանաց այնոցիկ տեղեաց, յորոց հեռի է Փոխանորդն, պարտաւոր են հսկել գործակալ քահանայք, ստանձնելով զայն ամենայն պարտաւորութիւնս և իրաւունս, զորս տրամադրէ 17-րդ յօդուածն կանոնաց եկեղեցական - ծխական ուսումնարանաց Հայոց վերաբերութեամբ փոխանորդաց:

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս յ2ն մայիսի ընդ համարաւ 182, որով ընդարձակէ զիրաւունս Գեր. Փոխանորդի թեմականին Հայոց Երևանայ բանալ ի Փոռ և յուզուն—Քիլիսա գիւղօրայս զեկեղեցական—ծխական միդասեան ուսումնարանս տղայոց, հաստատելով ի պաշտօն հոգաբարձութեան վասն առաջնոյն՝ զբարեկրօն Պօղոս քահանայն Տէր Ստեփանեան, զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և զյարգելի Աւետիսն Միրազիզեանց և անձնափոխանորդ՝ զպատուելի Յարութիւնն Բաբազիւլեանց. իսկ վասն երկրորդի՝ զբարեկրօն Յարութիւն քահանայն Տէր Կարապետեան, զերեցփոխան

եկեղեցւոյ տեղւոյն և զյարգելի Սմբատն Մալխասեանց և անձնափոխանորդ՝ զպատուելի Մարտիրոսն Գրիգորեան:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի նոյն թիւ և ի նոյն համար, որով հաստատէ ի պաշտօն հոգաբարձութեան վասն եկեղեցական-ծխական միղասեան տղայոց ուսումնարանին Հայոց Տաշբուտուն գեղջ զբարեկրօն Անդրէաս քահանայն Խօղոյեան՝ զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և զյարգելի Գրիգորն Մերունեան և անձնափոխանորդ՝ զպատուելի Սիմէօնն Մուրատեան:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ի 10 մայիսի ընդ համարաւ 190՝ յանուն Գերապատիւ վանահօր վանից սրբոյն Յովհաննու Իւչ-քիլիսէ կոչեցելոյ, որով շնորհէ նմա զպնակէ եպիսկոպոսական վասն սրբութեամբ պաշտելոյ նորա զկոչումն իւր Առաքելական և անձնուէր ծառայութեանցն Հայաստանեայց եկեղեցւոյ և հոգևոր որդւոց նորա և զաւակաց, որով գրաւեալ է առ ինքն զբաղցր ուշադրութիւն Կրօնական և Ազգային վարչութեանց Հայոց, որ ի Թուրքիա:

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ի 26 մայիսի ընդ համարաւ 206՝ յանուն Գերապատիւ Առաջնորդի թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի Սրբազան Մամբրէ եպիսկոպոսի, որով համաձայն ցանկութեան նորին հաստատէ ի պաշտօն Թեմական Տեսչի եկեղեցական - ծխական ուսումնարանաց Հայոց յիշեալ վիճակի՝ զբարեկրօն Եղիշէ քահանայն Գեղամեանց Բազու քաղաքի:

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 27 մայիսի ընդ համարաւ 207՝ յանուն յարգելի բժիշկ Լևոնի Տիգրանեանց, որով յայտնելով զսրտագին ցաւակցութիւն իւր ընդ մահ բարեյիշատակ Մկրտչի Սանասարեանց՝ թոյլատրէ ամփոփել զդի հանգուցելոյն ի պարսպի վանաց աւագ եկեղեցւոյն Հայոց Տփլիսաց:

Նրջարբերական Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս 130 մա-
 յիսի ընդ Համարաւ 211՝ յանուն թեմական Առաջնորդաց Հայոց
 Ռուսաստանի, որով վասն բարեկարգելոյ զթեմական դպրանոցս
 ըստ ուսումնական մասին, պատուիրէ յետ Հարցաքննութեանց՝ ար-
 ձակեալ Համարել ի պաշտօնէ զամենայն ուսուցիչս յիշեալ դպրա-
 նոցաց և յետ այնորիկ՝ յընտրութեան նորոց ուսուցչաց վարիլ ըստ
 Հետեւելումն—նախ ի պաշտօն ուսուցչի ընտրել զանձինս Հմուտս
 ի գիտութեան, բարեբարոյս և ջերմեռանդս ի կրօնի, նուիրեալս
 միանգամայն գործոյ և եթ դաստիարակութեան մանկանց, երկ-
 րորդ՝ յուսուցչութիւն թեմական դպրանոցաց հրաւիրել զանձինս,
 որք աւարտեալք են զընթացս ուսման ի բարձրագոյն ուսումնա-
 րանս և ի մասնագիտական բաժնի Հոգ. ձեմարանի Մայր Աթոռոյ
 Ս. Էջմիածնի՝ և երրորդ՝ յետ ընտրութեան ուսուցչացն՝ զանուա-
 նական ցուցակ նոցին մատուցանել ի նկատողութիւն և ի վախճա-
 նական տնօրինութիւն նորին Սրբութեան՝ Հանդերձ պարզաբա-
 նութեամբ ամենայն Հանգամանացն ևս և ցուցմամբ յականէ յա-
 նուանէ արժանեաց իւրաքանչիւրոցն ընտրելոց, թուոց դասուց և
 առարկայից և քանակութեան տարեկան թոշակաց նոցին:

Իսկամանա՛ծ չողո՛սս յիմ՝ օխո՛սողս քաղաքս անձ ձ հաս

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

21 մայիս. 1882 թուից սկսած՝ Քութայիսի արժանապատիւ
 Դաւիթ Աւագ քահանայ Եպարեանցը տարեկան նուիրում էր ե-
 րեսուն (30) ըուբլի Մայր Աթոռիս ձեմարանին: Այժմ մահամերձ
 Հիւանդութիւնից ապաքինուելով՝ ինքնաբերաբար խոստանում է
 գրաւոր՝ իւրաքանչիւր տարի փոխանակ երեսունի՝ վաթսուն ըուբ-
 լի նուիրել ցմահ, իսկ իւր մահից յետոյ կտակել Մայր Աթոռիս
 մի գումար, որից տոկոս ստացուի մշտապէս վաթսուն ըուբլի տա-
 րեկան, ի նպաստ ձեմարանի: Բացի այս զրամական նուէրից խոս-
 տանում է մահից յետոյ իւր Հարուստ մատենադարանն էլ նուիր-
 րել Մայր Աթոռիս:

Ասի իսկ յայլոս ծնող՝ ժայնս — մի՛ ձեմարանս ևս յայնմնոցոյ